Հավելված 1

“Credit Limit” ծրագրի շրջանակներում "ԿՈՄԲՈ" հետվճարային ծառայությունների փաթեթների աշխատանքի համակարգային թերությունները վերացնելու մասին

1. Կրկնօրինակ եւ Հիմնական ԿՈՄԲՈ հետվճարային ՍՓ առանձնահատկությունները.

Բոլոր ԿՈՄԲՈ ծառայությունների փաթեթները տրամադրում են բջջային կապի ամսական ներառումներ:
1. Հիմնական ՍՓ բջջային կապի ամսական ներառումների սպառումից հետո օգտագործված ծառայությունները տարիֆիկացվում են համապատասխան սակագներով:
! **2. Կրկնօրինակ ՍՓ բջջային կապի ամսական ներառումների (մասնավորապես՝ բջջային Ինտերնետ ծավալի) սպառումից հետո բջջային Ինտերնետի արագությունը նվազում է մինչեւ 1 կբիթ/վրկ ֆ դադարեցվում է Ինտերնետ հասանելիությունը, նույնիսկ "Գիգա" կամ այլ Ինտերնետ ծառայության ակտիվացման դեպքում:**

2. Կրկնօրինակ ՍՓ միացման/անցման ուղեցույց

Բոլոր գործող եւ նոր բաժանորդները կարող են ընտրել միանալ Կրկնօրինակ թե Հիմնական ՍՓ-ին:
1. Գործող ԿՈՄԲՈ Հիմնական ՍՓ բաժանորդները անցում կարող են կատարել Կրկնօրինակ ՍՓ-ին **յուրաքանչյուր ամսվա 1-ին, լրացուցիչ հաշիվներից խուսափելու նպատակով:**
2. Նոր բաժանորդները կարող են իսկզբանէ ընտրություն կատարել միանալ Հիմնական թե Կրկնօրինակ ՍՓ որևէ մեկին:
3. Գործող Կրկնօրինակ ՍՓ-ից Հիմնական ՍՓ հետ անցում կատարել կարող են **յուրաքանչյուր ամսվա 1-ին, լրացուցիչ հաշիվներից խուսափելու նպատակով:**

! **Եթե Կրկնօրինակ ՍՓ բաժանորդնը ունի անհետաձգելի պահանջ կասեցված բջջային Ինտերնետը կրկին ակտիվացնելու համար, ապա ՎՍԳ/D2D աշխատակիցը դիմում է ՎԱՈԻՎՎԲ բաժնին:**

3. Կրկնօրինակ ՍՓ համակարգային խափանումների վերացման մասին

Բջջային ինտերնետի ներառումների սպառումից հետո բջջային ինտերնետի արագությունը կարող է նվազել ոչ միանգամից, այլ հետաձգումով, որի ընթացքում բաժանորդը կարող է հասցնել գեներացնել ինտերնետ տրաֆֆիկ:

! Յուրաքանչյուր ամիս բիլինգային ցիկլի ավարտից հետո լրացուցիչ բջջային ինտերնետ տրաֆֆիկ գեներացրած բաժանորդների հաշվին գոյացած պարտքը ենթարկվում է փոխհատուցման՝ սույն հրամանում նկարագրված ուղեցույցի համաձայն:

4. Կրկնօրինակ ՍՓ բաժանորդների սպասարկման կարգը:

Ամսվա ընթացքում բջջային ինտերնետի արագության նվազման/բարձրացման համար հայտ չի ընդունվում:
Ցանկացած փոփոխություն իրականացվում է հաշվետու ամսվա 1-ին:
Փոփոխություն կարող են իրականացնել ՎՍԳ/ D2D աշխատակիցները:
ՍՓ փոփոխության դեպքում կնքվում է նոր պայմանագիր, որտեղ կատարվում է համապատասխան նշում՝ բջջային ինտերնետի արագության նվազեցման պայմանի մասին: